# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՌԵՆՏԳԵՆՅԱՆ ԶՆՆՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՊԵԿ-ԲԸՀ-ԾՁԲ-16/2

ք. Երևան « 29 » դեկտեմբերի 2016թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի, որը գործում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԵ--ն, ի դեմս Ընկերության լիազորված անձ Լ.Տեգեյի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ռենտգենյան զննող սարքավորումների սպասարկման ծառայությունների (ՀՀ ԿԱ ՊԵԿ Մեղրու և Գոգավան մաքսային կետերում տեղադրված Rapiscan Eagle Gantry 6(4,5) Mev մակնիշի ռենտգենյան զննող սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայություններ) մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (Հավելված N 2) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 2.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **396 000 000 (երեք հարյուր ինսունվեց միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

**4.2 Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայության արդյունքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի 7.1 կետով նախատեսված կնքվելիք համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներում:**

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

**Սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված Ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:**

**Սույն պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքվելու օրվան հաջորդող տարվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:**

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող

պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պատվիրատու**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011054112

ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

**Ա.Սահակյան**

**Կատարող**
«Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԵ
Շարժա Էրոպորտ
Միջազգային Ազատ Գոտի
P. O. Box 7975, Շարժա ԱՄԷ
Habib Bank AG Zurich
Deira Main Branch
Dubai, United Arab Emirates
Swift Code: HBZUAEAD
via Bank of New York, New York
A/C # 803-338-0748
CHIPS UID 097211
Swift Code: IRVTUS3N
Շահառուի անուն: Arempa International Limited FZE.
Հ/Հ: 20430-333-248474 (USD)
IBAN: AE07 0290 1204 3033 3248 474

ՀՎՀՀ 00352
«Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԵ-ի
լիազորված անձ՝

**Լ.Տեգեյ**

AREMPA INTL. LTD.
FREE ZONE
P.O.Box 7975, Sharjah-UAE

Հավելված 1
«29» դեկտեմբերի 2016թ. կնքված
N ՊԵԿ-ԲԸՀ-ԾՁԲ-16/2 ծածկագրով գնման պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

**Rapiscan Eagle Gantry 6(4,5) Mev ռենտգենյան զննող սարքավորման տեխնիկական սպասարկման ծառայությունների ընդհանուր նկարագիր**

| Մակարդակ | Սահմանում | Պատասխանատվություն |
|---|---|---|
| 1 | Կանխարգելիչ տեխնիկական ստուգումներ, սպասարկում, սարքավորման խափանման դեպքում իրականացվող վերանորոգումներ, Կատարողի կողմից մատուցվող ծառայության մեկնաբանում Պատվիրատուին, իրականացվող ծառայությունների անհրաժեշտության և պատճառա-հետևանքային կապի բացատրություն Պատվիրատուին | Ծառայություն մատուցող ընկերություն |

**Մատուցվող ծառայության մեջ ներառված են՝**

**<u>Համակարգի և ենթահամակարգերի սպասարկում, ինչպես նաև ստորև ներկայացված ենթահամակարգերի առանձին բաղադրիչների, դետալների, օժանդակ նյութերի</u>**

Արագացուցիչի ենթահամակարգի
Մոդուլյատորի ենթահամակարգի
Արագացուցիչի գազային ենթահամակարգի
Հեղուկային հովացման ջերմակայունության ենթահամակարգի
Ազդանշանի գրանցման (երևան հանման) ենթահամակարգի
Գեներատորային ենթահամակարգ
Մալուխային միացումների
Սկանավորման ենթահամակարգի
Օպերատորի աշխատատեղի անվտանգության հսկողության ենթահամակարգի
Էլեկտրոմատակարարման և էլեկտրողեկավարման ենթահամակարգի
Համակարգչային և Ծրագրային ապահովումների
Տեսադիտարկման և տեսահսկման ենթահամակարգի
Անխափան սնուցման ենթահամակարգի
Կոնդիցիոներային ենթահամակարգի
Բարձրախոսային կապի ենթահամակարգի
Ռադիոկապի ենթահամակարգի
Տվյալների հավաքագրման և դասակարգման ենթահամակարգի
Շարժական մեխանիզմի ենթահամակարգի
Պարբերաբար ճառագայթային մոնիտորինգ օպերատորի սենյակում և համակարգի տարածքում
Համակարգի ճառագայթային մոնիտորիգի համար նախատեսված սարքավորումների (Lundlum 12-4; Fluke 451) անխափան աշխատանքի ապահովում, կալիբրովկա
Ծրագրային ապահովումների թարմացում
Թեժ գծի ապահովում՝ շուրջօրյա հեռախոսակապ (նաև ինտերնետի միջոցով) խորհրդատվության նպատակով
Սպասարկման ընթացքում Համակարգի փոխարինման ենթակա պահեստամասերը և ծախսվող նյութերը ձեռք են բերվում Կատարողի հաշվին
Փոխարինված բոլոր պահեստամասերը պետք է լինեն չօգտագործված, գործարանային արտադրության (օրիգինալ կամ նրա համարժեքը) և պետք է ունենա 365 օրից ոչ պակաս երաշխիքային ժամկետ:

**Արձագանքման ժամանակը՝** Ծառայություն մատուցող ընկերությունը պետք է ձեռնարկի համապատասխան գործողություններ վերջնական Օգտագործողի կողմից տեղեկատվությունը Կատարողի էլ. փոստի վրա ստանալուց կամ Կատարողին հեռախոսով ահազանգելուց հետո 24 ժամվա ընթացքում:

**Նորմալ վերանորոգման ժամանակը՝** Ծառայություն մատուցող ընկերությունը Համակարգի նորմալ վերանորոգումը պարտավոր է իրականացնել ահազանգը ստանալուց հետո 2 օրվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ վերանորոգումը կապված է շարժական մեխանիզմի ենթահամակարգի,արագացուցիչի, գեներատորի, ջերմաստիճանը կարգավորող ենթահամակարգի, Մոդուլյատորային ենթահամակարգի, Սկանավորման համակարգի հետ, որի ժամանակ վերանորոգման ժամկետը կարող է երկարաձգվել ոչ ավել քան 20 օրացուցային օր:

**Կից ներկայացված է ՀՀ ԿԱ ՊԵԿ Մեղրու և Գոգավան մաքսային կետերում տեղադրված ռենտգենյան զննող սարքավորումների նկարները**

| Ծառայության անվանումը | Ծառայության մատուցման ժամկետը |
|---|---|
| ՀՀ ԿԱ ՊԵԿ Մեղրու և Գոգավան մաքսային կետերի Rapiscan Eagle Gantry 6(4,5) Mev ռենտգենյան զննող սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայություններ | Ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա և համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 360 օրացուցային օրվա ընթացում: |

**Պատվիրատու**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011054112

ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

**Ա.Ասատրյան**

**Կատարող**
«Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԵ
Շարժա Էրոպորտ
Միջազգային Ազատ Գոտի
P. O. Box 7975, Շարժա ԱՄԷ
Habib Bank AG Zurich
Deira Main Branch
Dubai, United Arab Emirates
Swift Code: HBZUAEAD
via Bank of New York, New York
A/C # 803-338-0748
CHIPS UID 097211
Swift Code: IRVTUS3N
Շահառուի անուն: Arempa International Limited FZE.
Հ/Հ: 20430-333-248474 (USD)
IBAN: AE07 0290 1204 3033 3248 474

ՀՎՀՀ 00352
«Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԵ-ի
լիազորված անձ՝

**L.Տեգեյ**

ARE[illegible]NTL. LTD.
[illegible]ONE
Y.S.
P.O.Box 7975, Sharjah-UAE





Հավելված 2
«29» դեկտեմբերի 2016թ. կնքված
N ՊԵԿ-ԲԸՀ-ԾՁԲ-16/2 ծածկագրով գնման պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| _____ | _____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«____» «_____» 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 2.1
« 29 » դեկտեմբերի 2016թ. կնքված
N ՊԵԿ-ԲԸՀ-ԾՁԲ-16/2 ծածկագրով գնման պայմանագրի

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N -------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

ազգանուն, անուն

ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն